



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ՍԸ

ՅՈՎՀ. ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՅ “ՎԱՍՆ ՓՈԽՈՑ ԵՒ ՎԱՇԽԻՑ,”

ԵՒ Ս. ԲԱՐՍԷԼԻ “ԸՆԴԴԵՄ ՎԱՇԽՈՂԱՑ,”

ՀԱՌԵՐՈՒՆ

Մեր նախնայ թարգմանութեանց պատմութեան մէջ, Ոսկերեանի և Եփրեմի գործերուն հաւասար, շատ կարևոր տեղ մը կը գրաւեն Բարսելի կենարացւոյ գրուածները, այս տարբերութեամբ սա. կայն, որ մինչ առաջին երկուքին գրու. թիւնը մեծագոյն մասամբ հայերէն թարգ. մանուած ու վանքիս տպարանէն լոյս տեսած են, ընդհակառակն Ս. Բարսելի գործերէն համեմատաբար փոքրիկ մաս մը թարգմանուած, ու հրատարակուած են միայն անոր « Յաղագս վեցօրեայ ա.

բարչութեան » ճառերը, — իրապէս հրա. շակերտ մը լեզուի, ոճի և իմաստներու գեղեցկութեան, — բարեբախտաբար մեր Ոսկեղարուն ամենէն ճարտար ու ճոխարան գրիչներէն մէկէն թարգմանուած: Մինչ անտարակոյս է թէ անոր միւս ճառերը՝ ոսկե. դարեան թարգմանչի մը հանդիպելու բախ. տը չեն ունեցած, և տակաւին վիճարա. նութեան նիւթ է բանասէրներուն մէջ անոնց թարգմանութեան ճիշդ ժամանակը, ուսմը է դարուն գնելով զայն՝, և ու. րիշնի՝ աւելի կանուխ կամ ուշ:

1. Ս. Հօրս « Ի Մեռնոյ փրկին » ճառին թարգմա. նութեան վերջը գրուած նախաբանին մը կը հաստատէ այն կարծիքը, թանի որ ճառին թարգմանին է նոյն

իսկ է դարուն ապրող Դաւիթ Տարսեցիին կամ Բա. ջրեանցացիին:



Այդ ճանորը զժբախտարար կը ձևան տակաւին մատենադարանաց խորշերուն մէջ՝ անտիպ և անմատչելի շատերուն, հակառակ որ անոնցմէ ոմանք՝ իրենց ոճին և իմաստներուն գեղեցկութեամբ՝ կը մրցին Վեցօրէից ճառերուն հետ, և ո՛չ նուազ հրաշակներու են պերճախօսութեան՝ իրենց կենդանի նկարագիրներով, իմաստասիրական խորունկ տեսութիւններով, վսեմ բարոյականով և գործնական օգտակար խրատներով, ինչպէս են «Հայեայն ի քեզ», «Առ ընչեպ» և ուրիշներ։ Բայց, ափսոս որ, այդ հրաշալի և իմաստալից ճառերը, յաճախ այնպիսի ապիկար, հետեակ, և յոյն ու հայ լեզուներուն անհմուտ թարգմանիչներու ձեռքը ինկած են, որ շատ բան կորսնցուցեր են իրենց բնիկ գեղեցկութենէն, խրթնացած, մթնցած, տփուռ, չկրնալով Ս. Հօր բարձր ու նրբին զաղափարները բացատրել հայերէն՝ իրենց պատշաճ ու վայելուչ լեզուով։

Յիշեալ ճառերը հաւաքուած ու օրինակուած են Մատենադարանիս թիւ 51 երկաթագիր մագաղաթեայ պատկառելի ձեռագիր հատորի մը մէջ, — մեծադիր, երկսիւն, 257 էջերով, և իւրաքանչիւր սիւն՝ 25 տողերով, — գրուած Հարութայ վանքին մէջ՝ անոր միաբան Սարգիս արեղայի ձեռքով, Քրիստոսի 1172. թուականին, Ներսէս Շնորհալոյ կաթողիկոսութեան վերջին տարին, ըստ հետեւեալ յիշատակարանի նոյն ձեռագրին. «Գրեցաւ գիրքս ի թուականիս Հայոց նորումս 920¹. իսկ Հոռոմոց ՅՂԿ. ի հայրապետութեան Վրաց և այդ բազում ազգաց Գեորգեայ որդւոյ Դեմետրիէի. գրեցաւ ձեռամբ Սարգիս նուաւստ գրչի²», ևն։

Այս համառօտ տեղեկութիւնը տալէն վերջը, անցնինք բուն իսկ նիւթին, այն է՝ համեմատելու Յովհ. Մանուկունոյ

«Վասն փոխոց և վաշխից» ճառը՝ Ս. Բարսեղի «Ջվաշխոցաց»՝ ճառին հետ։

Վաշխը, հին ժամանակներէն սկսեալ, մարդկային ընկերութեան ամենէն խոր վերքերէն մին եղած է, ու հակառակ ամենէն աւելի խիստ և ազդու միջոցներուն՝ անբուժելի մնացած, նոյն իսկ Քրիստոնէութենէ վերջը։ Հին Կտակարանին բոլոր զրեքը լի են խիստ պատուէրներով ու վճիռներով վաշխին դէմ, և Աւետարանը՝ իր գերազանց մարդասիրական սկզբունքներով՝ հանդիսապէս կը դատապարտէ զայն։ Եկեղեցին, աստուածային խօսքով զինուած, զթութեան ու սիրոյ զգացումներով վառուած, անհաշտ ու անողորմ կռիւ մը մղած է վաշխին դէմ, և չկայ Ս. Հայր մը՝ յոյն կամ լատին, հայ կամ ասորի՝ որ ամենէն աւելի այրիչ ու մրկիչ շանթերը տեղացած չլլայ վաշխառուններուն զլիւն։

Ս. Բարսեղ իր «Ընդդէմ վաշխոցաց» ճառը խօսքը է՝ ԺԴ սաղմոսին մեկնութեան առթիւ, երբ տակաւին պարզ քահանայ՝ կը մեկնէր սաղմոսները Կեսարիոյ ժողովրդեան։ Ասոնց մէջ կը պակսին տակաւին այն ճոխ ու շքեղ պատկերները, այն սաստիկ թռչիւ մտքի ու խանդի, որոնց յաճախ կը հանդիպենք իր Վեցօրէից ճառերուն մէջ, Հոս աւելի պարզ ու հանդարտ ոճ մ'ունի, բարի հօր մը գորովալիւ խրատները, ընդհանրապէս ուղղելով խօսքը այն թշուառներուն՝ որոնք կեանքի պէտքերէն մոլուած փոխ կ'առնէին վաշխով։ Բայց երբ առիթը կը ներկայանար՝ ձայնը կը բարձրացնէր ու բուն թափով կը յարձակէր վաշխառուններուն դէմ, որոնք հասարակաց խեղճութիւնը շահագործելով, կ'անգլխանային չքաւորներուն դէմ, պահանջելով անոնցմէ ամսէ ամիս իրենց փոխ տուած դրամին տոկոսը, ո՛չ

1. Այս թուականը՝ Յովհ. Սարգիսի վարդապետին հաստատման է յամին 1084, որ կ'ըստի նաև Սարգիս չափազանց կամ նոր բուսական։

2. Գ. Զարրհանալ. Մատենադարան ճառի. Բարգմանութեան, էջ 339-341. Վնեայի, 1889:

3. Այսպէս նշանակուած է ձեռագիրներուն մէջ ճառիս տիտղոսը. սակայն աւելի ճիշդ ու լուսաւորիչ է ըսել. «Ընդդէմ վաշխոցաց» ըստ յունի. «Κατὰ τῶν τοκιστών»:

տասը կամ քսան՝ այլ հարիւր ու աւելի ալ: Երբ տեսնէր մասաւանդ իր ունկնդիր-ներուն շարքին մէջ այդ անզգաձեւերը, ինչ դասակարգի ալ որ պատկանէին ա-նոնք, կ'որոտար, կը շանթէր, կը սպառ-նար, անոնց աչքին առջև դնելով դժու-քին անշէջ հուրը, խաւարը ու սոսկալի տանջանքները՝, այնպիսի կենդանի գոյ-ներով, որ պիտի կարծէիր տեսնել Միջին դարու նկարիչներուն անհրկու պատկեր-ները եկեղեցեաց որմերուն վրայ: Սակայն փայլակներ էին անոր մէջ այդ հոգեկան յոյզքն ու խռովքը, որոնք իսկոյն հան-դարտելով տեղի կու տային այն հայրա-զովթ խրատներուն և ամբողջ խօսքերուն, որոնցմով կը փոփոխ տառապեալներուն ցաւները, սիրելի և տանելի ընկելով աղքա-տութիւնը: « Լաւագոյն է, կ'ըսէ, վաճա-ռել աւելորդը, նուազեցնել պէտքերը, խոյս չտալ ամենէն աւելի ծանր ու նուաստա-ցուցիչ կարծուած աշխատանքն, ծա-ռայել, և նոյն իսկ մուրալ, քան թէ վաշ-խառուններուն ձեռքը մատնուի »: « Տե-սած եմ, կ'աւելցնէ, դեռահասակ մանուկ-ներ իրենց հայրերէն հրապարակ տարուած և վաճառի դրուած, վաշխառուի մը դրա-մը հայթաթիւն և համար՝ »: Եւ այսպէս յաճախ կը պատահինք ճառիս մէջ նման աղէխարշ նկարագիրներու և կսկծալի տե-սարաններու:

Մանդակունւոյն և Ս. Բարսղի այս երկու համանուն ճառերուն հարեանցի ակնարկ մ'իսկ պիտի բաւէ արդէն ցոյց տալու, թէ անոնք որքան սերտ ու անձուկ աղերս ունին իրարու հետ իրենց ծրագրով ու բովանդակութեամբ, և թէ ինչ չափով Մանդակունին օգտուած ու ներշնչուած է Ս. Բարսղին: Վերջնոյս ճառը՝ իմաստա-լից, շքեղ ու ընդարձակ է, ամբողջութիւն մը ներդաշնակ՝ իր պատշաճ մասերով ու չափերով. իսկ Մանդակունւոյնը՝ աւելի սեղմ ու ամփոփ, այլեայլ մասերէ բաղ-կացած՝ առանց ամբողջութիւն մը կազ-

մելու. առաջինը՝ լի ու հոծ կեանքի իրա-կան պատկերներով ու օրինակներով՝ ճոխ ու բազմակողմանի, յուզիչ ու գրաւիչ է. իսկ երկրորդը՝ Ս. Գրոց խօսքերով հիւ-ստած աւելի քան փաստերով՝ պարզ ու անսեղանթ է, բայց ազդու և կտրուկ: Ս. Բարսղի մէջ՝ արուեստի ներութիւն, ճա-շակ ու դասական գեղեցկութիւն կայ, որոնք ի զո՛ւր է փնտել հայուն քով: Սա-կայն երկուքին մէջ ալ նոյն աստուա-ծային շունչն է որ կ'անցնի, նոյն հուրն է որ կը վառի, նոյն յորդորներն ու խրատ-ները՝ կարօտեալներուն, նոյն անէծքներն ու նշողները՝ վաշխին ու վաշխառունե-րուն դէմ: Տեսէք ինչ ջիղ ու կորով կը դնէ Մանդակունին իր հետեւեալ խօսքե-րուն մէջ. « Վաշխ՝ գիտք եմ դիտկան. վաշխ՝ առհասարակաց է տանջանացն. վաշխ՝ ճանապարհ է գեհնին... չէ՛ մարդն այն քրիստոնեայ՝ որ վաշխ ժողովէ ան-իրաւութեամբ, այլ բազին է այնպիսին աստանայի լի մարդագոհիւր, գերեզման լի նիսեալ մեռելովը, նմանալ բորբո-քեալ հրոյ գեհնին... Իբրեւ ընդ օծս և ընդ գազանս խօսիմք՝ (ընդ նոսա) և, են: Ինչ որ ուսակայն Մանդակունւոյն ճառին ամենէն գեղեցիկ մասը կը կազմէ՝ հե-տեւալ հատուածն է, ուր Քրիստոսի ատե-նին առջև կը քաշէ վաշխառուն, ու կը հարցնէ անոր. « Չինչ պատասխանի տալ-ցես՝ յորժամ զքե շուրջ գայցին զրկեալքն ի վաշխից, ամբաստանելով զքէն առ դա-տաւորին... անդ ո՛չ աղօթք, ո՛չ ինչք, ո՛չ մեծութիւնք... աստի տեսանես զորբոցն արոսասուս, անտի գայրւոյն հառաչանսն, այլուր զկոփեալն ի քէն զաղբառն, զծա-ռայսն՝ զոր չարչարեցեր, զղրացիսն՝ զոր բարկացուցեր »: Եւ, են: Այս գեղեցիկ տո-ղերը կարդալու՝ կարծեմ Ս. Հօր մը մէկ հատուածը կարդալ, — ուր հեղինակին վառ երեակայութիւնը այնքան կենդանի գոյ-ներով կը պատկերէ վերջին դաստասանին սարսոցենոյ մէկ դրուագը, — և իսկոյն

1. Ս. Բարսղ. Ա. Մեկնութիւն Սաղմ. 1. Գ. 8.

2. Անգ. Սաղմուս. Ժ. Գ. 4:

3. Յովհ. Մանդակունւոյ Ճառք. էջ 66-7. Վեհաթիկ. 1880.

4. Անգ. էջ 68-9.

պրպտեցի Ս. Բարսղին «Ընդդէմ վաշխու-
ղաց» ճառին մէջ՝ թէ արդեօք հետեւողու-
թիւն կամ փոխառութիւն մ'է՞ր անկէ. և
երբ հոն ոչինչ գտայ՝ որ ասոր մերձաւոր
կամ հեռաւոր նմանութիւն մ'ունենար,
հաճոյք և զոհունակութիւն մը զգացի մէջս,
տեսնելով որ գէթ անգամ մ'ալ կրցեր է
հայը գերազանցել քան յոյնը։ Սակայն
քիչ վերջը, որքան յուսալար եղայ, երբ
նոյն Ս. Հօր «Առ ընչեղս» ճառին հայ
թարգմանութիւնը թերթելով, գտայ հոն
այդ բոլոր հատուածը յար և նման, ինչ-
պէս պիտի զնեմ յետոյ համեմատութիւն-
ներուն մէջ։ Բայց զարմանք չէ՛, երբ կը
տեսնենք որ մերթ մեծ միտքեր ու գրիչ-
ներ ալ ազդուած ու ներշնչուած են ու-
րիշներէն, և յաճախ անոնցմէ առնուած
ինքնատիպ ու բնորոշ գաղափար մը՝ մեծ
գործի մը ծնունդ տուած է։ Ս. Բարսեղ
անգամ ունի շատ փոխառութիւններ հե-
թանոս հեղինակներէ, իր վեցօրէից՝ ինչ-
պէս նաև ներկայ ճառիս մէջ, բայց այն-
պիսի ճարտարութեամբ՝ որ այլ ևս նմա-
նիլ չէ՛, այլ նոյն իսկ ստեղծում մ'է, և
քանի որ գիտէ միշտ ծնալ ինքնատիպ, և
նոյն իսկ գերազանցել քան զայն՝ ուսկից
օգտուեր է։ Եւ ասոր օրինակ կրնայ ըլլալ
ներկայ ճառս, որուն նիւթը, գաղափար-
ները, պատկերները, և յաճախ նոյն իսկ
բացատրութիւնները՝ փոխ առնուած են
Պլուտարքոսէն՝ և Բայց ինչ ահագին ան-
շըբպետ երկուքին մէջ, երբ կը տեսնենք
որ զիցարանութիւնը և արտաքին պատ-
մութիւնը կ'անհետանան քրիստոնեայ պեր-
ճախօսին զրչին տակ՝ տեղի տալու հա-
մար Ս. Գրքին բարձր ու վսեմ հեղինակու-
թեան, և հեթանոս մատենագրին իմաստ-
ները՝ Ս. Բարսեղի հմայքին տակ՝ ո՛չ միայն
աստուածային օծում մը կը զգենուն, այլ
աւելի երգիծական կը տեսնուին ճոխ պեր-
ճութեամբ մը կը ներկայանան՝ ինչ
զարմանք ուրեմն, եթէ մեր Մանդակունին

ալ՝ դիւթուած յոյն Ս. Հարց հոյակապ
ճառերէն՝ կը յետու և կը հիւսէ իր գրու-
թեանց մէջ մերթ Ոսկերեանին, մերթ Ս.
Եփրեմին, ու աւելի յաճախ Ս. Բարսղին
նկարագեղ պատկերները, անոր պերճա-
խօսութեան գունագոյն ծաղկներով ըն-
դելուած, և այսպէս հայ հեղինակին
զրչին տակ կ'ունենանք աւելի փայլուն,
աւելի մոգիչ ու աւելի թարմ բացատրու-
թիւններ։

Հ. Բ. Սարգիսեան, իր «Քննադատու-
թիւնք Յովհ. Մանդակունւոյ» գործին
մէջ, նպատակ ունենալով ապացուցանե-
լու անոր ընծայուած ու հրատարակուած
ճառերուն հարազատութիւնը, կը հաստա-
տէ թէ՛ մեր հայ ձեռագիրներուն մէջ՝
Մանդակունւոյն ճառերը յաճախ վրիպա-
կաւ ընծայուած են Եփրեմի կամ Ոսկե-
րեանի և անոնց անուամբ մականգրուած։
Սակայն չի կրնար ժխտել՝ թէ Մանդա-
կունին այդ երկու Ս. Հայրերէն, և մա-
նաւանդ Ոսկերեանէն, աւելի կամ նուազ
փոխառութիւններ ըրած է, և կ'եզրակացը-
նէ թէ «Որչափ որ Յովհ. Մանդակունւոյ
և Ս. Հարց (Ոսկ. Եփր.) ճառերուն մէջ
կան ինչ ինչ նմանութիւնք գաղափարաց
և ասութեանց, բայց այսպիսի մասնական
և սովորական երկրթներէ՝ ընդհանուր և
անսովոր հեռուութիւն մի յառաջ բերելու
անբաւական են»³։ Սակայն բնաւ չ'աւ-
նարկեր, և նոյն իսկ կը թուի բացարձա-
կապէս հերքել՝ թէ Մանդակունին կրնար
փոխառութիւններ ըրած ըլլալ նաև Ս.
Բարսղէն⁴։ մինչդեռ եթէ քիչ մ'աւելի
ուշադիր եղած և համեմատած ըլլար Ման-
դակունւոյն և Ս. Բարսղին՝ վաշխի և
վաշխողաց դէմ գրած՝ երկու համառուն
ճառերը, անտարակոյտ տարբեր եզրակա-
ցութեան պիտի յանգէր։ Նոյն Հ. Բ. Սար-
գիսեանը, Մանդակունւոյ ճառերուն ձե-
ռագրաց վրայ ընդարձակօրէն խօսած ա-
տեն, յիշելով «Երուսաղեմեան Ս. Յա-

1. Plut. De vitando aere alieno. I-VIII.

2. E. Fialon. Étude historique et littéraire sur
S. Basile. Paris. Thorin. 1869.

3. Քննադատութիւնք Յովհ. Մանդակունւոյ. էջ 76.

4. Անդ. էջ 75-6. 163-4.

կոմբայ վանաց հնազոյն օրինակ մը», կ'աւելցնէ. «Անոր մէջ տարբ թերթի չափ ուրիշ գրութիւն պարունակող ձեռագիր մը ներմուծուած է տարբեր գրչութեամբ... իրրկ յայտնուած, և այս յաւելուածին մէջ կայ... «Յովհաննու առաջինը Վասն Վաշխիյի և տոկոսաց փոխոց» ճառը, որ փոքր ինչ տարբերութեամբ Մանդակունոյ Ձ ճառին հետ նոյն է՝» — Հոս քիչ մը մթին կամ տարտամ է Հ. Բ. Սարգսեան, չեմ հաւանար թէ ինչ ըսել կ'ուզէ իր այս վերջին խօսքերով. եթէ կը հաստատէ թէ այդ ճառը՝ Մանդակունոյ անուամբ հրատարակուածն է և վրիպակա Ոսկերիւնի մակագրուած, ինչպէս են մեր ձեռագրաց մէջ, այս պարագային՝ լիութի համաձայն եմ Գրին. և իրօք չի կրնար այլազգ ըլլալ, քանի որ ինծի համար բոլորովին պարզ և յստակ է՝ թէ Մանդակունոյն ընտալուած այս ճառին միակ աղբիւր եղած են Ս. Բարսեղին «Ընդդէմ վաշխոցաց» և «Առ ընչիպս» ճառերը, ինչպէս ցոյց պիտի տայ հետեւեալ համեմատութիւնը.

ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

(Վառ քիւնի և վաշխի)

էջ 63. «Անշարին չար են քան զամենայն՝ փոխոցն տոկոսից, որ հնապագոյ հայտնիալ բարձրաբի հին և ի նոր կտակարանս».

էջ 63. «Առ ունկնդիր լինին իզեկելիւ... որ ընդ մեծամեծ լարեցոց զնէ զփոխոցն տոկոսից».

էջ 63. «Յապառած քաւանց պտուղ որոնէ... առանց սերման ծախ արդիւնս մողովիլ».

էջ 64. «Առ վերօք վերօք բռնիկ և ոչ մեղաց մեղք որբին».

էջ 64. «Եթէ աղքատ

Ս. ԲԱՐՍԵՂ

(Ջաշխիւց) (Խօսիւնք թերթեան-թիւն)

«Բազում ուրեք ի Գրոց հայտնի մեղքս այս... զտոկոսիս անուղ և զյաւելուածն».

«Եղեպիւն ի մեծամեծ շարեացն զնէ զտոկոսիս անուղ».

«Ատուղ խնդրես յանապատ... առանց սերմանց հեծես».

«Առ որ զվեր վերառող շարեացն, և ոչ զարարի բռնիկ».

«Իսկ որ պարտն և

ևս ինչ փոխապարտն, ի ծուփ և ի լուգ մայր հաւնապագ. անցուն և զառնացուն ի գիշերի նշխան նորա, ախուր և արտուած մտայոյ ի տուրնիան յընթիւ».

էջ 64. «Որպէս երկունց յայտնի մտազարթունց (վաշխիցն)».

էջ 64-5. «Յորժամ մայն ոսկին հարկանի, նա ի ներքս սրտարկի լինի յերկիւղէն... փախիլ և Բաքլի էրրի ի տարակուսանաց աղեղանի, և սիրտն Թափեալ զգողանի հարկանի».

էջ 65. «Վաշխիցն՝ վաշխ, չար մեղքոց՝ չար Թոնոն մտազարթունս. և այս են օճք՝ մեղքոց ի թից, ի թից մեղքոց զարգայն մօրն ծակին ելանին, և փոխուն մեղքոց՝ զգրիս վաշխաժողովանց պատանին և պանանին».

էջ 65. «Առանց երկրի տնկեալ՝ յանդին և առանց սերմանց հեծել».

էջ 65. «Եւ որպէս Բարազարցն յաղագս անմեղքաց մեղքին և մողովին յԱտուղով վառն սերմանցն և լիութեանց աշխարհի, իսկ վաշխաժողովն՝ կարտաութիւն և տարակուսանա աշխարհի ըզմանայ, զի ի գործն է ի շահ վաշխիցն ինչոն անկեպիցն».

էջ 66. «Տեսանելով զգալաւորութիւն և զտարտաւորութիւն պարտապանին՝ ոչ սղորմի, և ոչ երգմանն հաւատայ մողթողին, ոչ խոնարհի յաղագան վարանեցելոյն, այլ զփոխեալ անխոնարհելի և անհալոյն».

էջ 66. «Գրին եթէ զինչ ինչ նորա իցն՝ նմա արժանի, հետազօտէ՝ Թէ ոչ տարեալ Թաղացանէ, արտաքոյ զգուրս պահէ. ի մէջ բազմութեան թշնաման, ի սիրելիսն ամուշեցուցանէ, ի զրապարակն խեղդէ».

էջ 66. «Զար պատահում ի տոն. ի՞ կանա չար քան զմահ անանց

աղքատ և և բազմաճոգ, անցուն ի գիշերի, անցուն ի առեղծման, մտախոտ յամենայն ի կեանս. այսոքիկ նորա և ի գիշերին նախին ի սրբին և ի տուրնիան զմտան ըզմանին».

«Զոր օրինակ երկունց մեղքին, նոյնպէս և մտաւորութիւն (վաշխիցն)».

«Եթէ զգուրն բախես. ոչ ոք, փոխառուն ի ներքոյ մահաց լինի. ուժգնաբար ընթացեալ մտան ոք, զնորա հարկանէ գտրեալ».

«Վաշխիցն՝ վաշխ, չար մեղքոց՝ չար Թոնոն... Եւ նունց քարբից՝ տոկոսացն մեղքոց. Զքարբին ասին զորովայն մօրն առեւելով մեղքն, և վաշխից՝ գտունս պարտականացն ուսելով մեղքն լինին».

«Առանց երկրի տնկես և առանց սերմանց հեծես».

«Եւ որպէս Բարազարցն յաղագս անմեղքաց մողթողին՝ յաճախութեան սերմանցն, նոյնպէս և զուկաւորութիւն և տարակուսանա մողթղան խնդրես, զի գործն ցեղ ինչոն լինիցն».

«Տեսանելով ի չարեացն զայր խոնարհեալ... ոչ սղորմի, ոչ Բոյլ տայ մողթողին, այլ անխոնարհելի և անհալոյն կայ, ոչ ի պատաստես խոնարհի, եթէ երջնուս, ոչ հաւատայ».

«Յուզէ ի ներքոյ, զվառաւ քո հետազօտէ, եթէ արտաքս քան ի գրեալ, զգէ՛ առ ինչոն քարբէ... առաջի կնոն թշնաման, առաջի սիրելեացն ամաւշեցուցանէ, ի զրապարակն խեղդէ».

«Զար պատահում ի տոնի, անկեանս ցեղ կազմէ զկեանսն... ասեալ զա-

1. Այդ. 49-50. — Անտապարտայ այդ ճառը նոյնն ըլլաւու՝ Երուսաղեմի մատենադարանին Թիւ 972 ԺԵ. սագրին մէջ՝ Ոսկերիւնի գործերուն մէջ յիշուած կ'Ա. Յաղագս վաշխից ճառին հետ։ 2. Գր. 10. Զարբանաւ. 2-րդ. քարգման. նախեաց. էջ 608-10.

2. Յուզէ կ'ուզէ. «ճնողաց» յօտնայ։

3. Սխալ ու անիմաստ է գործ. պէտք է ըլլայ՝ յա-

հարին, արգիւնարին. յոյն կ'ուզէ ճարգի, զոր Բարգմանիւր կարգուով ձորի, գործ գրիւ է։ Մանդակունի՝ գործին հետ գրիւ է նաև լաւ, անանելով որ իմաստը զայդ կը պահանջէ.

4. Զեռագրին մէջ գրուած է ի տունիս, այսպէս ուղղելն է Մանդակունոյն մէջ ի տուն ի գրուածը։

փոխադարձութիւն. ստէ՛լ զաւարտեալ ժամագրութիւնը, երկընչի յամօթայն... տեսէ՛ք գորդմունքի տեսութիւնը։

Էջ 69. «Այլ թէ և յաղթաւանդան հասեր, թեղ լաւ է... ջրէն և մուրալ յողորմածաց, քան եթէ ի դաւանութենէ անօրէն վաշխիցն կերակրել։ Այլ ունիս ձեռն, ունիս ոտս, ունիս արուեստ. զործեմ, վարձեմ, սպասուորեմ և ուսեմ. յաւով հնարք են մարեմնոյ զարմանոյ, եթէ կարիս վաստակել։ Զի եթէ մըշկեմ լնչին ինչ զնոռն է, զինքն կորէ կերակրել. եւ միշտ քն զնչիւրս իւրեանք՝ կերակուր թաղարարք ընծանէ, որ ո՛չ ձեռն և ո՛չ գործիս արուեստի ունի՛ր ստացաւ։ Իսկ թեղ եւ Աստուած ձեռն և զործիս և միտս ամենա հնարս, անմեղութեամբ հաւատարեալ զանա՛ղ կենդանայս»։

Էջ 68-69. «Դի՛ր դու առաջի՛ տալոց զգիրտառո՛ր դատաստանն. զինչ՛ զաւաստեալիս տայցես՝ յորժամ զգն շուրջ զայցեն զկեանքն ի վայելիցն աւրատանելով զքն առ զաստարիւն. զինչ՛ անխիցն, ո՛վ թշուառականդ, ի՛նչ աղաւանդ։ Այն ո՛չ աղօթք, ո՛չ ինչք, ո՛չ մեծութիւնք. անպատա՛ւ եւ ի սիրելեաց, հոգի յօցնականաց, տառնց խօսնակի, տառնց պատասխանայ, մաղցեցաւ, աղբառւմ, տխուր, միայնացեալ, առանց համարմանութեան. զի ո՛ր և ի շուրջ մօրիցս զակն, յայտնապէս տեսցես զարեանց զպատկերս՝ զոր զործեալ իցես. առաք տեսնես զորոցն արտասուան, անտի զայրույն հառաչանալ, այլուր զկուփեալն ի քն զաղցանք, զծառայան զոր լաղարեցեցի, զզարցան զոր բարկացուցի, ամենեցեան քնդ ի վերայ յարիցեն, և զքնը դադի ի վերայ՝ չարաց քոց զնեց քո ջրիցքին հաճապաւ. զի զոր օրինակ շուրջիւր անմեղելի է ի մարդոյն, նոյնպէս և մեղքն

ուրան առ ժամագրութիւն ճակատել, երկնի յամոռն, տեսիս եւ ողորմելի տեսանն»։

«Այլ տկարութիւն ունիս, մուրս ի ստացողացն, և եթէ ամօթ է մարանալն, վատթարագոյն եւ փոքր անուշ և զրկելի. էլ զիւրդ կերակրեցայց, տեսաւ Ունիս ձեռն, ունիս արուեստ, վարձեմ, սպասուորեմ»։ յաւով հնարք կենցաղայւրազում զանգամուրթիւնը։ Զի եթէ մըշկն կորէ՝ ոչ մարանալով և ոչ ի վարձու անուշ՝ կերակրել, և մեղուց զնչիւրս իւրեանց կերակրելու՝ թաղարարք եւ շնորհն, որոք ո՛չ ձեռն և ո՛չ արուեստ բնութիւն եւս. իսկ զու անմեղաբ կենդանի՝ մարդ, մի յամենեցուն հնարիցն ո՛չ զըսցես առ ի կենցաղայւր ո՛րն ունայ»։

«Ո՛ր առաջի տալոց առցես զգիրտառո՛ր դատաստանն»։ զինչ՛ վարեացես՝ յորժամ շուրջ զքն կայցեն զկեանքն, բարեառելով զքն արդար դատարարին. զինչ՛ ստացես, անդ ո՛չ զնեց դեմե փաղաղուցքն, ո՛չ ինչք, ո՛չ մեծութիւն արժանաւորութեան. անպատա՛ւ ի սիրելեաց, ամայն յօցնականաց, տառնց խօսնակի, տառնց պատասխանայ, մաղցեալ... որոտում, տխուր, միայնացեալ, տառնց համարման կութեան, զի ո՛ր շուրջ մօրիցս զակն, յայտնապէս տեսցես զարեանց պատկերս. առաք զորոցն արտասուալ, անտի զայրույն հառաչանալ, այլուր զկուփեալն ի քն զաղցանք, զծառայան զոր լաղարեցեցի, զզարցան զոր բարկացուցի, ամենեցեան քնդ ի վերայ յարիցեն, զմեղակ պար լաղարեց քոց զործեց զնեց զալ քո. քան զի զոր օրինակ հոգանի բարեմայ, սոյնպէս և հոգւոյն մեղք զնեց երթան յայտնապէս՝ զզործն կերպարանելով. վասն այնու

անմեղելի զնեց երթան զործայն. յայտնապէս զկերպարանս բազմութեան մեծացն ցուցանէ ամենայն հրապարակելու վասն այլ. նորիկ ո՛չ որ կարէ որսանալ անդ զործոցն զզգոնութիւնն. այլ կայի լեզու չարախօս, կարկէ բերան անօրէն... զի էլ բաքանչիւր ուրոց մեղք վկայեն զզործնեացն»։

Այս համեմատութենէն բնական կու գայ հետեցնել, թէ Մանդակունին իր «Վասն փոխոց և վաշխից» ճառին մէջ ուղղակի յոյն բնագրին վրայն ըրած չէ՛ իր փոխառութիւնները, այլ հայերէն թարգմանութենէն՝ զոր անպատճառ առջևը ունեցած է, քանի որ հայ թարգմանչին ո՛չ միայն բառերն ու բացատրութիւնները՝ այլ նոյն իսկ անոր վրիպակները անցուցած է իր ճառին մէջ։ Եւ իրօք կը տեսնենք որ հեղինակը աստուծոյ ճիգով՝ ջանքով՝ ունի չզգացնելու իր այդ փոխառութիւնները, որուն համար բառերուն ու պարբերութեանց մէջ անհարկի փոփոխութիւններ կը ներմուծէ, հոմանիշներ կը գործածէ, խօսք մ'աւելի կամ պակաս կը զնէ, համարելով անով պարտկել իր բանաբանութիւնը ու կարկատանքը, և իր ինքնատիպ ու սեփական երկ մը ներկայացնել իր այս ճառը։ Այս իրողութեան առջև խնդիրը քիչ մ'աւելի կը բարդուի, և հարկ կ'ըլլայ՝ կամ Ս. Բարսեղին ներկայ ճառին թարգմանութիւնը Ե զարուն զնել, ուսկից կարինար օգտուիլ Մանդակունին, — և կամ, հակառակ պարագային, եթէ ամենէն կանուխ Զ կամ Է զարուն զնենք անոր թարգմանութիւնը, այն ժամանակ պիտի ստիպուինք Մանդակունեայ ընծայուած այս ճառը՝ միւս ճառերուն կարգին դուրս հանել և տանիլ Զ-Ը զարբերուն կամ աւելի ուր։ Արդ տեսնենք թէ կարելի՞ է որ Ս. Բարսեղին սոյն ճառը Ե զարուն թարգմանուած ըլլայ։

1. Ուղղել է յամոռն, ինչպէս է Ս. Բարսեղի հայ թարգմանութեան մէջ, Յոյնը կ'ընէ։ «Երկնի յամոռն» որք ձեռնին գտական»։

2. Այս ամբողջ հատուածը Ս. Բարսեղի «Առ ընչեղ» ճառն է, ինչ թարգմանութեամբ։

3. Ուղղել է պար լալ յոյն բնագրին և հայերէն թարգմանութեան։

Այս խնդիրը լուծելու համար՝ դրական ու արտաքին փաստերը չունինք, այլ լուր անոր լեզուին և թարգմանութեան ինչ ինչ հանգամանքներէն պիտի կրնանք որոշ եզրակացութեան մը յանգրիւ Բաղդադէն լով զայն յոյն բնագրին հետ, կը տեսնենք որ չափազանց խղճմամբ, կամ լաւ ևս՝ տառական ու նիւթական թարգմանութիւն մ'է, ոչ բառ մ'աւելի՝ ոչ բառ մը պակաս, պահելով ճիշդ յոյն բառերուն կարգը, և նոյն իսկ անոնց հոլովումը կամ լծորդումը, կարծեմով թարգմանիչը պակսիլ այնպիսի մեծ Ս. Հոր մը յարգանքէն՝ եթէ այլազգ վարուէր իր թարգմանութեան մէջ, Այնպէս որ՝ երբ կարող չ'ըլլար ըմբռնելու բնագրին ճիշդ միտքն ու իմաստը, — ինչ որ յաճախ կը պատահի և ցոյց կու տայ թարգմանչին շատ չափաւոր հմտութիւնը յունարենին, — ինքը մեզի անոր բառական թարգմանութիւնը կու տայ, նախընտրելով աւելի մութ ու անհասկնալի ըլլալ՝ քան թէ սխալ կամ անճիշդ իմաստ որ տալ Ս. Հոր խօսքերուն, Սա. կայն պէտք է աւելցնել, որ թարգմանիչը՝ ոչ միայն յունարենին՝ այլ նոյն իսկ իր բնիկ լեզուին այնչափ տէր և հմուտ չէ, որով յոյն բառերուն համապատասխան և հարազատ հայերէն բառերը չգտնելով, ինքը կը ստեղծէ կը հնարէ այնպիսի խորթ ու անտուր բառեր, որոնց տառերը միայն հայերէն են։ Թարգմանչին յոյն լեզուի անհմտութեան ապացոյց ու արդիւնք են նաև այն բառական թուով խոշոր վրիպակները և թիւր հասկացողութիւնները, որոնց յետոյ պիտի տամ օրինակները։ Հոս, առժամ, բոլոր գիտողութեանց կամ տեսութեանց հաւաստիք մը և թարգմանութեան ոճին ճաշակ մը տալու համար, մէջ կը բերեմ Ս. Բարսեղի «Բնդդէմ վաշխողաց» ճառին սկզբնաւորութիւնը՝ հին

Թարգմանութեամբ, դիմացն ալ դնելով յոյն բնագրին աշխարհաբար թարգմանութիւնը.

« Երէկ, է շորեցտասան, ներորդ սաղմոսն խօսելով, եկեալք է սպասուած բա. նին է ծամին ոչ յորդորեալք եզեաց. իսկ այժմ եկաց բարեմտութեամբն պարտապանք զպարտա նուագեցելոցն է ձկնէլ պահանջիս¹։ Եւ, է նուագութիւնն փոքր ինչ լսել, որպէս զի սոյնպէս եթէ թուեցի, և այսպէս ըստ զան ի ձկնէլ մոռացաւ², զի մի ինչ միտացէ զսաղմոսն ի մանալ³, Մեծ առ ի կենցաղոյս իրս զօրութիւն ունի զփոքրս զայս բան աւսանել, ոչ վարկաց պարս զու գանց անել զքննութեանն պիտոյիք⁴, Գրեւով բանել զպատարելութիւնն մարգարէս, զան շարժ կենաց ի վերայ ելալ նել⁵ մանանդ⁶, է քաշարութիւնսն թուեաց արծաթ իւր վաշխել ոչ տալ⁷։

« Երէկ, շորեցտասան, ներորդ սաղմոսն վաշխաւով, ծամանալք ընդերմեր՝ որ խօսքերնս վերջացնէինք. բայց հիմա, իբրեւ բարեմտ պարտապան մը, եկանք հատուցանելու ձեզի մեացած պարտքը։ Այդ թողումը իբր՝ կարե խօսք մ'է, ու այնպէս կ'իբրեւ, որ թերս ձեզմէ շտաբէն վրեպած ըլլայ, մինչև կարենք՝ թէ սաղմոսն բան մը դուրս չնետայ, Սաղմոսն զիտնալով թէ այս փոքր խօսքը մեծ կարեւորութիւն ունի կեանքի իրերուն համար, պարտա համարեցանք զան ընել անոր քննութենէն առաջ՝ զալիք օրուրը։ Մարգարէն նկարագրելով կատարելաւ մարգարէ որ պիտի (մանչ) ժառանգէ յաճառեալ կեանքը, անոր լաւութեան մէջ դասեց նաեւ՝ վաշխով դրամ չաւալք⁸։

Բարեբախտաբար թարգմանիչը այս քայլով առաջ չ'երթար, այլ ճիշտ ճիշտ աւելի հասկնալի կը դառնայ, աւելի պարզ և յստակ լեզու մը կը գործածէ, ուր մասնաւոր Ս. Հայրը վարդապետական կամ բարոյական բարձրութիւններէն կ'իջնէ նկարագրականին կամ գործնականին, և երբ Ս. Գրոց վկայութեամբք ազդու և նուիրական կ'ընէ իր խօսքերը, Հոս ալ սակայն կը կազայ թարգմանիչը, երբ Աստուածաշունչին խօսքերն իսկ կը յաւանակի ինքը հայացնել, փոխանակ դիմելու մեր Ե դարուն ոսկեղինիկ թարգմանութեան, ինչպէս կ'ընէ Առակաց գրքին հետեւեալ խօսքին. զի մինչ մեր Ս. Գրքին թարգմանութիւնը կ'ըսէ. «Փոխառուի և փոխառուի է մի վայր հասեցը, երկու-

1. Յոյն. կ'ըսէ. ἀποτινύντες (ἀποτινύω). ճառասանել։

2. Յոյն. Եւաց. քերեւալ։

3. Յոյն. παρῆλαθεν. փակեալ. վրիպեցաւ։

4. Յոյն. νομι(σ)θηναι. կարծել. համարել։

5. Յոյն. χροψιμον. օրուր, շաբ։

6. Յոյն. ἐπιβήσομαι (ἐπιβείναι). ելալու է վերայ. նոյնպէս մտանել (է եերցալ)։

7. Յոյն. μελλόντα (μελλω). կողմ՝ պարտաւ լիւնել. (բայերուն աներևոյթ ելալուակէն շատ) պարտի, օսելի, կայ. Թարգմանիչը կարգեց և մալլուցել. մտեալուն։

ցունց հանդէս առնէ Տէր», Ս. Բարսղին թարգմանիչը կ'ըսէ. «Վաշխողի ե փոխապարտի պատահեցելոց իրերաց, այցելութիւն երկաքանչիւրումն առնէ Տէր»։ Առաջինը՝ ինչպէս կը սահի, կը սուրայ, երկրորդը՝ հագիւ կը զեռայ, կը սողայ. մին՝ Ոսկեղարու ծնունդ է, միւսը՝ պղնձի։ Յաճախ կը պատահինք ճառիս մէջ այնպիսի անսովոր բարդութեանց՝ որոնք յատուկ են միայն թարգմանչիս, ինչպէս են. յետեւումնորին (ὕστεροβουλία), փոխանակ ըսելու «ստրվանք, ապաշաւ»։ հարիւրաժողովք, տասնաժողովք (ἐκατοστολόγοι, δεκατηλόγοι). քացածեօրանայ (ἀπογινόςκομαι), փոխանակ ըսելու «վատարի, անյուսանալ», են. և ուրիշներ՝ որոնք կը գրանուին միայն է և ը դարուց յունարան թարգմանչինքուն մօտ, ինչպէս են քաղմատութիւն (πολυμαρξία), վաճառարան (ἄγορά), հէշակիրութիւն (ἡδύτης), են։ Սոյն և նման բառեր աւելորդ է փնտռել Ոսկեղարու շրջանին մէջ։

Բաց աստի, ճառիս մէջ բազմաթիւ վրիպակներ կան թարգմանութեան, յունարէն բառերը շփոթելով մէկը միւսին հետ, ինչ որ զժողաբաւ գոցէ պիտի պատահէր Ոսկեղարու յունագէտ թարգմանչի մը, և պէտք է դիտել՝ թէ այդ վրիպակները և թիւր հասկացողութիւնք ուղղակի թարգմանչին են և ոչ ձեռագիրներուն օրինակողաց, ինչպէս կը պատահի երբեմն։ Քանի մ'օրինակ բաւական պիտի ըլլայ ըսածս հաստատելու — Յոյնը կ'ըսէ. «Քանիք յունորչս (δναρ). ճոխացեալք, ի գարբնոյն (ὑπαρ) կրեցին զտուգանս»։ հայը կը թարգմանէ. «Քանիք անորքը ընչաւետացեալք, աստեղ վայելեցին ի տուգանս»։ հոս թարգմանիչը փոխանակ ὑπαρ-ի, որ հակադիրն է δναρ-ին, կարդացեր է ὑπερ, որ կը նշանակէ ասանել, ի վերայ — Յոյնը կ'ըսէ. «Լաւագոյն է խորհրդովք (հոգալով) աս փորք փորք ընուլ գպետս»։ հայը կը թարգմանէ. «Լաւագոյն է աս փորք խորհուրդս գնեռ միւթթարել»։ հոս χρεῖα (պէտք, կարօտութիւն) շփոթել է χείρα (ձեռն) բառին հետ — Յոյնը՝

վաշխառուն ակնարկելով՝ կ'ըսէ. «Զի իբրեւ զշուն ընթանայ ի վերայ որսոյ» (τῇ ἄγορῃ). հայը կը թարգմանէ. «Զի իբրեւ զշուն ընթանայ ի հրապարակի» կարդալով τῇ ἄγορῃ։ Յոյն ἀπορος բառը կը նշանակէ անհիշ, կարօտեալ, մերթ ևս՝ տարակուսեալ. հայը ամբողջ ճառիս մէջ՝ առանց ուշ դնելու իմաստին՝ միշտ տարակուսեալ և տարակուսանք կը թարգմանէ ἀπορος և ἀπορία բառերը. օր. իմն. «Ի՞նչս, ասա՛ ինձ, և շահս խնդրես ի տարակուսելոյն»։ հարկ էր ըսել յանդիմն, ի կարօտելոյն։ Այսպէս նաեւ ἔκτισις, որ է՝ հաստացում, կատարում, վճարում, են, հայը միշտ ստացում կը թարգմանէ, անշուշտ շփոթելով κτήσις բառին հետ, և ասով բաւական իմաստի խառնակութիւն առաջ կու գայ։ Յոյն ἀλεξιφάρμακον բառը՝ որ կը նշանակէ անդեղեմալ, հայը կը թարգմանէ օտակար դեղ։ Ինքը յոյն բառերուն առաջին նշանակութիւնը միայն գիտէ. օր. իմն, θεραπεύω, թշկիչ. որով կ'ըսէ. «Թշկի գըռ պէտսն», փոխանակ ըսելու, լնո, դարմանէ, հայրայրք, են։ Յոյն τόκος բառը կը նշանակէ հաւասարապէս ծնունդ, շահ կամ տոկոս. թարգմանիչը կը շփոթէ մէկը միւսին հետ, որով Ս. Հօր նըբար միտ տեսութիւնը անգրգալի կ'ըլլայ հետեւալ խօսքին մէջ. «Քանիք ծնունդ, որպէս կարծեմ, յաղագս բազմածնութեան չարին անուանի»։ հոս հարկ էր ըսել տոկոս։ Ո՞վ կարող է գուշակել՝ թէ ինչ կ'ուզէ ըսել թարգմանիչը հետեւեալ խօսքերով. «Եւ հանդերձ ծրարովք միշտ ի փոխատուին, ի չար պատահմանէ փախչի ի տարակուսանացն յանդիմանութենէ»։ բնագիրը կ'ըսէ. «Եւ շարունակելով միշտ փոխատուութիւնները ու չարիքը, չի զգար իր չըբարութեան թշուառ վիճակը»։ Նոյնքան անհասկանալի են նաեւ հետեւեալ քացատրութիւնները, առանց բնագրին օգնութեան. «Ո՛չ ճանաչէ զստացուածն», որ պէտք է հասկնալ, «Անյոյս կ'ըլլայ հատուցանելէ»։ — «Մնայ յուրացութեան», այսինքն է՝ «Էր մնայ (հաստատուն) իր մերժումին մէջ»։ — «Վասն զի

ոչ առնուն՝ զորս հաւատանն», այս է՝ «Որովհետեւ իրենց հաւատացողներ չուներն»:

Այս և ուրիշ նման օրինակներ բաւականէն աւելի ցոյց կու տան, թէ կարելի չէ՝ բացարձակապէս Ոսկեղարու շրջանին մէջ դնել ճառիս թարգմանութիւնը. այս է ընդհանրապէս բանասիրաց կարծիքը, զոր կը թուի հաստատել նաև Ս. Բարսղի ճառերուն երկաթագիր օրինակին մէջ «Ի Խնունդ Փրկչին» ճառին վերջը դրուած յիշատակարանը. «Դաւիթ թարգման Տաւրոսեցի զճառս զայս յետոյ դարձոյց յուներն ի հայ բարբառ ի Դամասկոսացոց քաղաքին հրամանաւ Համազասպայ կուրապաղատի Մամիկոնեանից տեառն»: Բանասէք՝ աոյն Դաւիթ Տարօնեցին նոյն կը համարին՝ Է դարուն Ներսէս Շինող կաթողիկոսին ժամանակ ապրող և Ասողկէն յիշուած և գովուած «Իմաստասէր և մեծ փիլիսոփայ» Դաւթին հետ, Բագրեւանդ զաւառին Բագաւան գիւղէն¹, որ թուի Բիւզանդիոնի մէջ քաղաքական մեծ դիրք ու պաշտօն ունեցած, և իրեն կրօնական համոզումներով ալ մերձաւոր ու սիրելի Յունաց, և ասոր համար՝ Գրիստոսի 648 թուականին՝ Բիւզանդացի կայսեր կողմանէ դեսպան ղրկուած Հայաստան, կրօնական միութեան և ուրիշ կարեւոր խընդրոց համար², Բանասերներէն ոմանք, ոճի և լեզուի մեծ նմանութիւն գտնելով սոյն ճառիս և Ս. Բարսղի միւս ճառերուն թարգմանութեան մէջ, կը համարին որ Դաւիթ Տարօնեցին կամ Բագրեւանդացին ըլլայ նաև անոնց թարգմանիչը: Սակայն Հ. Գար. Զարրհանալեան կը թուի հա-

կառակ կարծիք ունենալ, յիշատակարանին «յետոյ դարձոյց ի յունէն ի հայ բարբառ» խօսքերէն հետևեցնելով, և կ'ենթադրէ թէ «մէկաներ կամ շատերը (ճառերէն) առաջուց թարգմանուած էին»³: Բայց այդ խօսքերով կարելի չէ՝ նաև հասկնալ, թէ յիշեալ Դաւիթը նախապէս թարգմանած ըլլալով Ս. Բարսղին ճառերը Բիւզանդիոնի կամ Հայաստանի մէջ, «յետոյ» Դամասկոսի մէջ թարգմանած ըլլայ «Ի Խնունդ Փրկչին» ճառը: Սակայն ինծի համար երկրորդական խնդիր է՝ թէ ո՞վ եղած է Ս. Բարսղին ճառերուն թարգմանիչը, այլ էականն է՝ թէ «Ընդդէմ վաշխողաց» ճառին թարգմանիչը պէտք է Ոսկեղարու շրջանէն դուրս փնտռենք, ինչ որ անհերքելի իրողութիւն մ'է, ըստ իս, մեր վերոյիշեալ պատճառներուն համար, մինչև որ նոր փաստ մը կամ պարագայ մը չգայ խախտելու մեր կարծիքը և անոր հակառակը հաստատելու: Ասկէ բնականաբար կը հետեւի, ինչ որ նոյնպէս անհերքելի է, թէ Մանդակունւոյն ընծայուած «Վասն փոխոց և վաշխից» ճառը գրեթէ ամբողջապէս, — ի բաց առեալ 2-3 էջերը՝ որոնց աղբիւրը տակաւին չկրցայ զտնել, — քաղուածոյ մ'ըլլալով Ս. Բարսղի «Ընդդէմ վաշխողաց» և «Առ ընչեղս» ճառերէն, և այն ալ՝ ո՞չ ուղղակի յոյն բնագրէն՝ այլ հայերէն թարգմանութենէն, ինչպէս ըսինք վերը, անկարելի է որ Մանդակունւոյ հարազատ գործ ըլլայ յիշեալ «Վասն փոխոց և վաշխից» ճառը, այլ ուրիշ Յովհաննէս անուն վարդապետի մը՝ Է դարուն կամ ուրիշ յետնագոյն ժամանակի:

Հ. ՅՈՎՀԱՆՆԵՍ Վ. ԹՈՐՈՍԵԱՆ

1. Հ. Գար. Զարր. Պատմ. հայկ. պատմութեան. էջ 435-6.

2. Հ. Միք. Չափեան. Պատմ. Հայոց. Բ. էջ 349-450, 3. Պատմ. հայկ. պատմ. էջ 346.

